Ասլանը ոչինչ չպատասխանեց: Պատոելին, հաւատացած լինելով, որ իր այցելուն շատ գոհ մնաց իր դպրոցից, վստահութիւն ունեցաւ հարցնելու:

— Պարոն, կարծեմ դուք բժիշկ էք:

— Այո՛, բժիշկ եմ:

— Այդ իմ քիթը... մի խօսքով... շատ է նեղացնում ինձ... — Նա այժմ աջ ձեռքի ցուցամատը կոխեց աջ կողմի պնչածակի մէջ, սկսեց քչփորել:

Ասլանը նայեց նրա երեսին եւ ասաց.

— Քի՛չ օղի խմեցէք, եւ կը լաւանայ ձեր քիթը:

Մենք դուրս եկանք դասատնից: Այդ ժամանակ միայն նկատեցինք դասատան դռան մի կողմում երկու պատժուած աշակերտներ: Երկուսն էլ մերկ ծնկներով չոքեցրած էին մանր, սրածայր խիճերի վրայ, երկուսն էլ ձեռքերով վեր էին բարձրացրել մի-մի հատ ամբողջ աղիւս: Մի այլ աշակերտ, ճիպոտը ձեռքին, կանգնած էր նրանց մօտ, հսկում էր, որ դատապարտեալները իրանց դիրքը չփոխեն:

— Ինչո՞վ են յանցաւոր այդ ողորմելիները, — հարցրեց Ասլանը մօտենալով նրանց:

— Ես, պարոն, պատոիրել եմ իմ աշակերտներին, որ դրսում ոչ ոքի հետ չխօսեն, մինչեւ անգամ իրանց ծնողների հետ չխօսեն, միշտ լուռ ու մունջ լինեն (լռութիւնը ամենագլխաւոր պայմանն է համեստութեան): Իսկ այդ գարշելիները չեն պահպանել իմ պատոերը:

— Դուք ինչպէ՞ս իմացաք, որ չեն պահպանել:

Սովորական ժպիտը դարձեալ երեւաց պատոելիի դէմքի վրայ, եւ այս անգամ նրա կարմիր աչքերը բոլորովին անյայտացան հաստ կոպերի տակ: Երեսի վրայ որքան կնճիռներ կային հաւաքուեցան աչքերի շուրջը եւ նրանց ծածկեցին իրանց կոհակների ներքոյ:

— Ես, պարոն, ամէն բան գիտեմ եւ ամէն բան կարող եմ իմանալ, — պատասխանեց նա մի առանձին պարծենկոտութեամբ: — Իմ աշակերտներից որի վրայ կասկած ունեմ, թէ նա չէ պահել իմ պատոերը, բերանը չափում եմ, իսկոյն իմանում եմ, արդեօք նա դրսում խօսացե՞լ է, թէ ոչ:

— Երեւի, եթէ խօսեցած լինի, բերանը կը մեծանայ:

— Այո՛, կը մեծանայ, ի հարկէ, կը մեծանայ, պարոն:

Ասլանը այս անգամ չկարողացաւ զսպել իր ծիծաղը: Պատոելին կարծելով, թէ իւր գիւտը զարմացրեց նրան, աւելի խրախոյս ստացաւ, եւ դառնալով դէպի վարպետ Փանոսը, որ բոլոր ժամանակը լուռ էր, հարցրեց.